

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿԱԲՈՒՑՄԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ԱՐՄԱՏՆԵՐԻ և ԾԻԼԵՐԻ ՓՏՈՒՄՆԵՐ

Արմատների և ծիլերի փտումների հետևանքով բերքի կորուստը կարող է հասնել 15-20%-ի: Փտումներն առավել ուժեղ զարգանում են սերմերի խորը և խիտ ցանքերի, ազոտական միակողմանի կիրառման, ցանքաշրջանառություններ չիրականացնելու դեպքում: Հիվանդության զարգացմանը նպաստում են նաև օդի ջերմային կտրուկ տատանումները: Առավել տարածված է արմատային սովորական փտումը և ձյունաբորբոսը:

### ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ



1. Արմատային սովորական փտում
2. Ձյունաբորբոս

### ՑՈՐԵՆԻ ՓՈՇԵՄՐԻԿ

Հիվանդությունը արտահայտվում է ցորենի հասկակալման-ծաղկման փուլում: Հիվանդ բույսերը առողջներից ծաղկում են մեկ շաբաթ շուտ: Վարակված բույսի ամբողջ օրգանները, բացի առանցքից փոշիացած են: Սև փոշին ընկնելով ցորենի ծաղիկների վրա անցնում է հատիկի մեջ: Վարակված հատիկը ոչնչով չի տարբերվում առողջներից: Հատիկ մեջ ձևավորվում է մրիկի սնկամարմինը, սերմը ծլելիս, սնկամարմինը սկսում է զարգանալ և ծաղկման փուլում, հատիկի փոխարեն առաջանում է սև փոշի, որը կրկին վարակում է ծաղկած ցորենը: Հիվանդության կանխարգելման համար անհրաժեշտ է կատարել սերմացուի ախտահանում:

## ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ



### ՑՈՂՈՒՆԱՅԻՆ ԺԱՆԳ

Ուժեղ վարակի դեպքում բերքի կորուստը կարող է կազմել 45–60 %: Ախտահարված բույսերի մոտ ընկնում է հատիկի հացաթխման որակը: Հիվանդության հարուցիչ զարգացման համար անհրաժեշտ է 18-25° C ջերմաստիճան և 95-100 % օդի հարաբերական խոնավություն: Ցողունային ժանգն ուժեղ զարգանում է աշնանացանի վաղ և գարնանացանի ուշացած ցանքերում: Միջանկյալ տերը կծոխուրն է:

## ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ



### ՏԵՐԵՎԱՅԻՆ ԴԵՂԻՆ ԺԱՆԳ

Երբ հիվանդությունը կրում է համաճարակային բնույթ, բերքի կորուստը կարող է հասնել 30 % և ավելի: 15-25 ° C ջերմաստիճանի և 95-100 % օդի հարաբերական խոնավության դեպքում հիվանդությունը կարող է կրել համաճարակային բնույթ: Հասկերի վարակի դեպքում նվազում է 1000 հատիկի կշիռը:

### ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ



### ՏԵՐԵՎԱՅԻՆ ԳՈՐՇ ԺԱՆԳ

Գորշ ժանգից հացահատիկի բերքի կորուստը կարող է հասնել 5-10 %-ի: Հիվանդության հարուցիչը պահպանվում է աշնանացանի ցանքերում և զարնանը տարածվում զարնանացանի վրա: Հիվանդության միջանկյալ տերը քնձմնձուկն է: Գորշ ժանգով վարակվում են նաև հացազգի այլ մշակաբույսերը:

### ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ



## ԱԼՐԱՑՈՂ

Բերքի կորուստն ավրացողից կարող է հասնել 10-15 %-ի: Հիվանդությունն առավել մեծ վնաս է հասցնում տաք ու խոնավ վայրերին: Բույսերի վարակը տեղի է ունենում +10-35 ° C ջերմաստիճանի և 60-100 % օդի հարաբերական խոնավության պայմաններում: Գարնանացանի վաղ և աշնանացանի ուշ ցանքերը համեմատաբար քիչ են տուժում ավրացողից: Օդի բարձր և ցածր տատանումները դանդաղեցնում են հիվանդության զարգացումը:

### ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ



### ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԺԱՆԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԼՐԱՑՈՂԻ ԴԵՄ

1. Կատարել ցանքաշրջանառություն, ցորենի համար նախորդ չընտրել գարին, աշորան:
2. Ապահովել ցանքերի տարածական մեկուսացումը:
3. Ցանքից առաջ սերմերը ախտահանել:
4. Ցանքից առաջ սերմերն ախտահանել՝ ռաքսիլ 0.5լ/տ, ռաքսիլ ուլտրա 0.2կգ/տ ախտահանիչով:
5. Խուսափել ազոտական պարարտությունների միակողմանի օգտագործումից: Կատարել բույսերի համալիր պարարտացում՝ հիմնվելով հողի ազոտփոխանակության փորձաքննության արդյունքների վրա:
6. Վեգետացիայի ընթացքում, երբ ստորին հարկի տերևների վրա երևում են հիվանդությունների առաջին նշանները, բույսերը սրսկել ստորև առաջարկվող ֆունգիցիդներից որևէ մեկով. բայլետոն՝ 0.5 կգ/հա, տիլտ 0.5 լ/հա (2 սրսկում, 30 օր սպաման ժամկետ): Նույն ֆունգիցիդի անընդհատ օգտագործման հետևանքով հիվանդության հարուցիչները ձեռք են բերում դիմադրողականություն, հետևաբար ֆունգիցիդները անհրաժեշտ է հերթափոխել: